

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոչխարին համար 12 Թր.
Տարեկան 6 »
Վեցամսեայ Արսասահմանի համար 15 »
Վեցամսեայ 8 »

Ավերիկայի համար 3 սյր.
Տարեկան 1.50 »
Վեցամսեայ 1.50 »

Ծանուցանեալ սոցր առաջին երեսին համար 40 և
իսկ վերջին երեսին համար 20 սակարկել է. երե
ինկ անկի անգամներու համար 20 0/0 զեղչ կըր

1 աշ:
Վառուայի համար ձևով 10 սակարկել

ՁԱՐԹՈՒՄ

ՄԱՐԿԻ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂՂՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐԸՄԻՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԹԻ ԵՒ ՇՈՐԵՔ ՕՐԵՐԸ

Նախկին և նորալ գրկել
Քարտագրութեան հաս
ցեիկ:

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoum“
Varna (Bulgarie)

Արսասահմանի համար
ձևով
(20 ՍԱՆԹԻՄ.)
Պոչխարին համար
ձևով
(15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք ևս չեն տրուիր

«ՇՈՐԵՔՈՒՄ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱԺԱՆԿԻՆԸ ՊԵՏՐՎԱՐԻ ԵՒ ԿԱՆԵՍԿՎԱՅԻՆՆԵՐԸ

ՇՈՒՎԱՓԻՆ

Եկայ սրտի քաղցր յոյզով
Բեզ, ո՛վ ծով,

Ու նայեցայ ալիքներուն
Երբերուն .

Ականջ տըրի, մրմունջ մը կար,
Որ արկար .

Աղու ձայնով կ'օրրէր քեզ, ո՛վ
Շըբեղ ծով .

Տեսա՛յ ինչպէս կը պարէին
Հոն լըռին՝

Արեւակները շողերուն հետ
Սիրուէա .

Եւ նայուածքս թըռա՛ւ հեռուն՝
Մոլորուն .

Թռչնակի պէս՝ դէպի ճամբան
Անասնան .

Նաւակներու թևատարած
Ըզմայլած՝

Ուզեցի որ դէպի ինձ բերէր
Յամբերեր .

Մէջիկ վերայ լուռ, անխորով
Սահելով .

Սիրոյ նաւը՝ իր մէջ Յոյսին
Դիպուհին .

Եւ ուզեցի որ իմ հոգին
Մեղմտէին

Ալիկոնուէր՝ բերած իրեն
Լուրերին .

Թէ կայրը չե՛ն ա՛յ գերի
Թուրքերի .

Ալ ազա՛տ է ալիտատան
Հայաստան .

Վ Ե Տ Ա

ԹԵ ԻՆՉ Է ՍՕՑԻԱԼԱՎԱՆ
ՅԵՂԱՓՈՒՍՈՒԹԻՒՆ

«Ես յաւիտեակ ժիւոց ոգին
եմ, և իրաւունք աչ ու
նիւլ: որովհետեւ աւեկ ինչ
որ կը ձեռի, արժեք ունի,
նիւայն որովհետեւ պիտի
նկնի» .

(Կեորիկն «Ժամանակ»)

Ինչ ծանօթ հայ յեղափոխական
ներէն մէկ քանիներուն հետ ըրած
մասնաւոր խօսակցութիւններս գիտ
թելադրեցին այս յօդուածը գրել:
Խօսակցութեան, որոնք յեղափոխական
շարժման պարագլուխներու տեղ կը
անցնին, բնաւ հաշիւ սուած չեն

ինքնիքննք թէ արդեօք յեղափոխա
կան ըսուած բանը ինչ կը նշանակէ .
լա՛ւ բան է թէ գէշ, կուտուր: Թէ
ուրիշներ կուտայ: Այս պարոնները ա
ուանց հաշիւ տալու իրենց խղճներուն
առջեւ, կիլլան բերանացի կամ մա
մուրի միջոցով ժողովրդականացնեն.
լու ու քարոզելու անհամ անտեղի
բաներ. ինչ ինչ փոխուքներ խորա
պէս համոզուած ըլլալով որ այդպի
սակաւ գործերը կը կատարեն,
առանց կասկածելու թէ միայն կը
պղտորեն ու կը խաւարեցնեն ժողո
վրդին առանց ասոր ալ շուարած
միտքը: Այս պարոններ կը փութան
ժողովրդին մաքին մէջ՝ իբր անուշ
ապուրի մէջ լինելու իրենց բակլան,
լուրիւն կամ ընկոյզը. իսկ մտաւո
րական ասանկ խտն անհոգ կերակ
րուող ազգ մը մտքով շուարած կը
լայ եւ քարեպատե՛ն առթին ճարպոտ
պոչ կը դառնայ ամեն զտամ թէ ե
րիտասարդ, ցիլիւստար որ կամ կու
լա կըրող դէմակօկի ձեռքը, Այդպի
սինքն իրենց գոյութիւնը ժողովրդին
մտաւորական ցած մակարդակին կը
պարտին: Ես ինքս լսած եմ հայ յե
ղափոխութեան յառաջիմական հատ
ուածին պատկանող բանախօսներ,
որոնք բարձրաձայն կը յայտարարեն
թէ յեղափոխական է միայն այն մար
դը, որ հրացան չայկած լեռ հինգէ
ու հոն կը սեռնի, իր մահուամբ ազ
գին բնաւ օգուտ չբերելովը հանգերձ:
Աւելի վարը պիտի տեսնենք թէ որ
քան ճիշդ են այս պնդումները եւ
որքան յեղափոխական է Տաճկաստա
նի մէջ կուտողը կամ հալածուողը մի
այն: Անձնաւորութիւններէ չէ որ
հոս կը գարչինք, այլ այն սխալ ու
խեղաթիւրուած գաղափարներէն, ո
րոնցմով կը սնուցանեն ժողովուրդը
ու կը կաշկանդեն անոր միտքը: Ե
թէ բոլորակապիտան կամ ակիտաղք
մը իրականութեան տեսնամպատա
խան ըմբռնուինք ու հայեացքներ
ուսի իրականութեան անհամապա
տասխան գործունէութեան մը ձեռք
կը գարնէ, հետեւաբար գործունէու
թեան մ'ը, որ վերջի վերջոյ Տօն
Գիշտական պսակով կը վարձատրուի:
Անտարակոյս ունինք լուրջ ու ճշմա
րիտ գործիչներ, սակաւ անոնց շար
քին մէջ կան այսպիսիներ ալ, որոնք
միայն աղմուկ վերցնելու ու դէմակօ
կութիւն ընել գիտեն, բայց մը որ
առաջ կուգայ՝ ժողովրդին կարօտ
կութիւնը քաղուած ու բանաձեւուած
առարկ համոզումներու պակասութե
նէն:

Բայ յօդուածով, բայց թող ներքեւ
մեզ մեր այս «անվայել ընթացքին»
ու «յանդգնութեան» համար, որով
հետեւ ամեն տեսակ փառասիրու
թիւններէ վեր կը կենան աւելի
վսեմ՝ շահեր, աւելի վե՛ն նպա
տակներ, աւելի մեծ ձգտումներ.
այն է սթափնցնել գերիին թմրած
միտքը, որ դարբնով ամէն բան կար
տաղրէ եւ կը կերակրէ ինչպէս տա
ճիկ սուղթանները ու սուղթանները,
բայց նոյնպէս հայ սուղթանները,
բայց նոյնպէս հայ սուղթանները:
Ամէն զիջակից մարդուն պարտքն է որ
ուշի ուշով ուսումնասիրելէն ետք՝
հասարակութիւնները կատարող
օրէնքները, կուտուրայի ու լստաձ
գիմութեան ուղիին վրայ մարդկու
թիւնը յառաջ մղող շահերը, դառա
կարգային բնաւորութիւնը արդիար
իւնտու աւելութեան, ուր փոքրա
մասնութիւնը անհամար ժողովրդին
կոնսիլին վրայ երջանիկ կեանք կը
վարէ եւ զիջութեան ու ցոփու
թեան մէջ կը լողայ, իսկ մեծամաս
նութեանը վտարուած նոյն հասարա
կութեան անտուն անտէր կը թափա
ռի եւ ծնած օրը կանխէ: Ինչպէս
պիտի ըսէր Թուրքիայի «Լուսինը»
— ամեն գիտակից մարդու պարտքն է
կըսեմ, որ ժամանակակից զրական
փիլիսոփայութեան հիմնարկ գիտին
մէջ յարգուած ու բերեցուցած ըմ
բանութիւնը համաձայն գործէ ու
ազգէ այն մասսային վրայ, այն ղե
ժօկարացիային վրայ, զոր նոր ժամա
նակը հանած է պատմական բեմին
վրայ մեծ դեր մը կատարելու. նոր
կեանք տալ ամենուն: Իսկ նոր
կեանք չ'անկախողը արդէն մեռած
է, ինչպէս կըսէ Ամիշի: Սակայն
այս նոր կեանքը կղերներուն քարո
զածը չէ, որոնք, Տիարոյի արդարա
քի դիտողութեան համեմատ, երկին
քը ծախած են երկիրը վայելելու
համար:

Կը ստեղծուէ ազգ մը, անտեղի թէ
րոր կը ցանէ, ապարդիւն մահ կը
սփռէ, որմէ ոչինչ կենսատու կը ծը
նի: Այո, մենք անդրդուելի կեր
պով համոզուած ենք թէ մարդկային
պատմութեան մէջ կան բոլորներ,
երբոր հրով ու արիւնով պէտք է
պաշտպանել ժողովրդի շահերը, բայց
լաւ ըմբռնուած շահերը: Չենք, օ
րինակի համար, այնպիսի յեղափո
խութեան կուտակիցներ, զոր քանի
մը ամիսներ անոնք արուեստական
կերպով Մակեդոնեայի մէջ հնարեցին
քանի մը վարձկաններ:

(*) Ապագային պիտի նուիրենք
յօդուած մը «մակեդոնական հարցին»:
Ասիկա բնիկ կը հարկադրուինք սոյն
հանգամանքէն որ հայ հասարակու
թեան ու անոր վարիչներուն ալ
գլխին մէջ թանձր խաւար կը տրիէ
այս խնդրի մասին:
(**) Ղարիբ «Դարբնի երգը» գրկ. Գ.
Եր. 14



Սրանով պաշտօնապէս յայտարարում ենք բոլոր Հնչակեան շրջանակներին և Հայ հասարակութեան, 1) թէ՛ ամեն կարգի ոճրագործութիւնները և հայ, յիշատակեալ գործի գէ՛տ իրենց լարած սուկալի դաւադրութեան պատճառով, հուսակցութեանս շարքերից ընդմիջտ արտաքուստ են հրահրին Վերջակով. Հնչ. հերձաւածին պատկանող Ալէքսան Արզուեան (Վահէ), Վահան Ծահ. րիման, Վահրամ Գրիգորեան, կարապետ Փափազեան, պատ. Գարեգին Չիթճեան, Աւսնդ վարդապետ Մարգարէտեան, Աւարտարկուեան (Սուրէն Սուրէնեան), Չարեհ Գոչեան, Մարտիրոս Տ, Յովհաննէսեան ու Բարդաթեան և իրենց տգիտութեամբ դրանց ձեռքին գործիք գարձած խմբակը:

2) Հնչակեան կուսակցութեան պատկանող անհատներ Հմայեակ Խուչպուլեան, Ս. Բարսեղ Ռոտտիկեան (Կուսակ) և Գրիգոր Գարիբեան (Հրաչեայ) արտաքուստ են առաջինների դաւադրութեան մասնակցելու համար:

3) Վերոյիշեալ խմբակի դաւադրական ձեռնարկը ամբողջովին երեւան եկած լինելով, գեռանչիակ դեկ. 5-ի ներքին շրջաբերականով յայտարարած էր Արզուեանի, Շահրիմանի և Գրիգորեանի կուս. կենտ. Վրչ. անդամակցութիւնից արտաքուստը, Հնչ. Մասնաճիւղերի հետ որ և է յարաբերութիւն ունենալու, նա և կուսակցական որ և է պաշտօն վարելու իրաւունքից զրկւած լինելը: Բայց օգտուելով այն հանգամանքից, որ Հնչ. միութեան ժամանակ Վ. Շահրիման և Վ. Գրիգորեան եւս ընդունւած էին Հնչակի իրաւատիրութեան ցանկի մէջ, որպէս էախկին Վեր. հերձաւածի ներկայացուցիչները յայտնի պառակտիչ Չիթճեանի գործակցութեամբ, իրենք իրենց կենտրոն թխելով, սկսեցին իսկական հնչակի հետ զուգընթացաբար մի կեղծ Հնչակ հրատարակել տարբեր հասցէով և Ա. ԲՕԼՊԱՄՏ կեղծանունով:

Յայտնելով այս բոլորը ի գիտութիւն ընդհանուրի, զգուշացնում ենք մեր բոլոր ընկերներին և հայ հասարակութեանս պիտ կեղծ Հնչակի և յիշեալ դաւադիր և յեղ. գործը շահագործող խմբակի ամեն կարգի շահատակութիւններին:

(Հին) "Հնչակ"

ԴԻՄԱԿՆԵՐԸ ՊԱՏՈՒԵՑԱՆ ԴԱՒԱԴԻՐՆԵՐԸ ԴՈՒՐՍ

Ոչ միայն նրանց համար, որոնք յատկապէս զբաղուած են հայ յեղափոխական գործերով, այլ և բոլոր այդ գործով հետաքրքրուողները համար էլ, այլ եւս արեւի լոյսի պէս պարզ է, թէ ինչ է եղած և է՛ վերի յայտարարութեան մէջ յիշեալ անբա՛հուչակ խմբակի գերը յեղափոխական ասպարէզում: Միայն նրանց պակասում է այն, ինչ որ այժմ ամեն նախադաս կերպով գոնուում է մեր ձեռքում: Մենք չպիտի թողնենք ինչո՞ւ թողնենք սրանց իսկական նպատակը, որպէսզի հայ հասարակութիւնը աւելի խորը թախաճեցնելով նրանց նողկալի գերի և միջին նպատակները խորքը՝ շտապէ օր առաջ այս տխրահոյակ հերոսների նկատմամբ, իրենց արժանի պատժի դատաւճիտը արձակել: Ո՛ւժ յայտնի չէ այն խանդավառ օգեւորութիւնը, որով մենք ձեռք էինք պարզում մեր կուսակցութեան նախկին վեր. հերձաւածին: Մեզ օգեւորում էր յեղափոխական մարմինների միացման և միասնաբար ուժերով յեղափոխական ասպարէզը նետելու գաղափարը: Բայց ո՞վ կարող էր երևակայել թէ հենց այն վայրկեանին, երբ այդ անարգ խմբակը իւր մի ձեռք իրր թէ եղբայրաբար դէպի մեզ էր պարզում, այդ միտնոյն վայրկեանին, միւս ձեռքով մի սուկալի դաւ էր պատրաստում, ոչ միայն մեզ, այլ և ամբողջ Հայ յեղափ. գործի դէմ:

Որքան որ վարպետողը կերպով աշխատել էին այդ դաւադրութեան գրաւոր հետքերը կորցնել, որը մասամբ յաճողով էին, բայց և այնպէս մեր ձեռքը անցած գրաւոր վատերաթղթերն էլ ամենապարզ կերպով ապացուցանում են ոչ միայն մեր դէմ լարած քստմեծի դաւաճանութիւնները, այլ և մեզինքն ստաջ մի ուրիշ կուսակցութեան հետ վարած բանակցութեան միեւնոյն նպատակը...: Մենք այստեղ չպիտի մոռենք նրանց ստոր մանրամասնութեանց մէջ, այդ, ինչպէս և նրանց հրատարակութիւնը, թողնում ենք միտնոյն անդամի, եթէ հարկադրւած կլինենք այդ տխուր պարտակնութիւնը կատարելու, սակայն յիշեալ զօրութեանները կը մնան մի մշտական նախատիք այդ հայտնիութեան իրերի համար:

Դրանք ինչո՞ք թիւն համարելին, մեր թիւ շրջ. ներքին շրջաբերականի քննիչ յանձնախմբի առաջարկը շուրջ ձգելու համար, չեղած, չլուսած օյնիքազութիւններ խողալ, որ ասպատակ ենք նրան անողորմ մերկացումներին: Բայց չզիտենք այդ որքան պիտի յաջողի իրենց... Յիշեալ խմբակի հաւաքական դաւադրութիւնը երեւան գալուց առաջ, պակաս նշանակալից չէր դրանց անհատական սխրագործութիւնների յայտնութիւնները: Օրինակ, երբ երեւան եկաւ Ալէքսան Արզուեանի հազարաւոր ոսկիներ վատնելու և Միւնիթր-Բէյի նրա և իր ընկերների թոշակ ստանալու խնդիրը, մենք պահանջեցինք, որ մեր պաշտօնակիցը հրապարակ զայ և հերքէ այս սուկալի ամբաստանութիւնները: Մեզ պատասխանը եղաւ, թէ դրամական ամբաստանութեանց չպիտի է հաստատւել, իսկ Միւնիթր-Բէյի խնդիրը, Վահրամ Գրիգորեանի ասելով՝ զպա-

տիւ կը բերէ անոր՝ Արզուեանին, Դաշնակցականը նախանձէն կը սենկոր: Պատուելի Չիթճեան նախապէս իւր մի շրջաբերականով վկայում է թէ «այդ բանակցութեան» շնորհիւ անոր յաջողեցաւ Սուլթանէն իրապէ՛ մը բերել տալ, որը կը պահել Հնչ. կուս. (՝) արխիւին մէջ: Մենք դեռ չզիտենք այն շարեաթիւնները, որով Սուլթանը մի խումբ հայ յեղափոխականների (՝) առատ թոշակով վարձատրելուց յետոյ, անոնց ցանկացած իրատէն էլ շնորհէ, Սիէ իրաւ է, որ Սուլթանը այդքան բարի տրամադրութիւն ունի դեպի պատվարները, որքան աւելի զթառատ պիտի լինի դէպի իր խաղաղ հայատակները: Իսկ եթէ այդ բոլորը այդպէս է, չարքան մի թիւրիւթեցութեան հետեւանք պիտի համարել մեր 300, 000 դիւկաները, կամ ուղղակի իրենք էին յանցաւորները, իրենց մորթուելու համար...: Բայց այդ բոլորը միայն, իրողութիւնը այն է՝ որ իրենց բերանով ապացուցում է Արզուեան Միւնիթր-Բէյի պայմանախտութիւնը: Նոյնպիսի մասնաճապատ սպաստախանութիւնը նաև Շահրիմանի մատնութեան: Գրիգորեանի գողութիւնների (որի քառակուսի ապացոյցը տուաւ կենտ. գանձարանի վերաբերմամբ իրաւ ընթացքով) և Փափազեանի դաւադրութիւնների մասին տուած մեր հարցերին, Փափազեանի մասին այժմ մենք կատենք, որ նա է՛ բոլոր գաւերի և շարքերի առանցքը:

Մենք տեսանք դաւադրների միութեան նպատակը, այդ ծրագրերը բաւական հին է, իրենց հանգուցեալ հոր՝ Արքիարեանի վայրիայած երազները, մտնել յեղափոխական կազմակերպութեանց մէջ, նրանց կործանելու նպատակաւ: Մի քայլիս ծառայութեան համար Սուլթանը ոչ թէ մէկ, այլ մի քանի իրապէսներով պատրաստ է արտայայտել իրաւ երախտագիտութիւնը:

Բայց ինչո՞վ է ղեկավարվել զրանց յեղափոխական տարրը, այդ էլ անհետաքրքիր չէ: Միտնած, դիակ դարձած մարմին երակներուն մէջ թարմ արիւն մտցնելու և կովկասի յամառութեան օգնութեամբ, գործը շահագործողներին միակելու համար: Այս հայեցակէտը բուսական խիստ քննադատելի է, բայց անցածը անցել է, որքան էլ որ այժմ յեղափոխական այրող հանգամանքները մեզ ստիպում են բացառապէս իրենցով չզբաղել, այնու անհայնի մենք անտես չենք աւելի նաև մեր միջոցաւակնակած բազմաթիւ գործը: Նա արդէն սկսած է, որ մենք կկատարենք ամենաանողորմ կերպով, այլ եւս դաւադիրների, դաւաճանների դիմակը պատռելուց և նրանց ժողովրդի ցատուների նշանակ դարձնելուց զատ, ինքնեքս էլ կհալածենք միջուկը իսպառ մահացումը՝ այդ նորագոյն Մերութեաններին...:

Վերջացնելուց առաջ մի երկու խօսք էլ դրանց գարշելի մտքերի անարգ արդիւնքը եղող կեղծ Հնչակի մասին աւելորդ չենք համարում: Չը նայած որ մի շարք բարոյական և իրաւաբանական ստիւր կուսակցութեան նիւթ մեր ոտքերի տակ, Անգլիական օրէնքով արգիլելու համար այդ կեղծարարները հրատարակութիւնը, բայց գերազանցելուց այդ դատաւարութեան համար ծախսելիք գումարները յատկացնել կուսակցութեան բուն նպատակին, հայ յեղափոխական գործին,

որով թուում է թէ շուրջ ձգած պիտի լինենք նաև նրանց ծրագրի միտնոյն կէտը, այն է, եթէ կործանել չկարողացան, գոնէ զգաղցնեն իրենցով և շուտեւ մեր բարոյական և նիւթակաւ ուժերը: Իսկ դաւաճանների անարգ մտքի սրտադրութիւնը յանձնելով հայ հասարակութեան դատաստանին, հաւատացած ենք այդ անհարազատ արտադրութեան հակասագրական կերպով մահաւան դատաւարութեան վճարին:

Հին "Հնչակ" Թիւրք

ԲԱՑ ՆԱՍԱԿ
ՍՈՒՊ. ՎՍՐԴՈ

Պ. Վարդօ՛, կը կարծէի թէ Վարդանանց հանդէսին մէջ ձեր ընթացքի անպատշաճութիւնը արդէն զգացած ու զղջացած կըլալիք: Սակայն այդ մասին իմ ունեցած պատրանքս վարատեցաւ, երբ կարդացի «Նարեկ»-ի մէջ Վարդանանց հանդէսի նկարագրութիւնը, ուր այնպէս ցոյց տալ կուզուէր՝ կամ աւելի ուղած էիք ցոյց տալ: Ինքզինքս կորսնցնելով անտեղի միջամտութիւն մը ըրած եմ ձեր խօսելու առանձնը:

Ոչ միայն ինքզինքս չէի կորսնցուցած, այլ՝ աւելի քան երբէք իմ անձիս տէրն էի, և ճիշտ ատոր համար էր որ ձեր խօսքին միջամտեցի միայն այն պատիւ, երբ հանդէսին նախարկանութեան զխառող անձնական յարձակումներ կընէիք: Իօսքերս սխալ ըմբռնած ըլլալնից և անտեղի յարձակումներ ընելու իրաւունք չունենալնից յայտարարելէ վերջ, կատարեալ իրաւունք չեմ ունենում իրաւունք մասին իմ ունեցած պահանջիս վրայ պնդելու: Սակայն ժողովրդեան աւելորդ յուզումը չը պատճառելու համար, խոհեմութիւն համարեցի գոբուս ելնել, և ինչ որ ես չըրի, ժողովուրդը ըրաւ ինքնաբերաբար, զձեզ շուտ մնալու դատաւարտելով:

Ինքզինքը կորսնցուցած ըլլալու պարագան տւելի ձեր անձին համար կրնայ ճշմարիտ ըլլալ՝ եթէ կուզէք այս մասին ուղիւ համոզում մը գոյացնել: Զանձարոյթը յանձն առէք հարցնելու ձեր բարեկամներուն. անոնք ձեզ պիտի ըսեն թէ հոգեկան ինչ վիճակի մէջ և ինչ տրամադրութիւններով բեմ ելաք, Ստաւոսժ մի՛ արասցէ, եթէ հանգիստ կանոններն իրաւաբանչիւրը, ինքզինքը՝ պատ զգար ձեզ նման բեմ խոյանալու և ուղած խօսքերը պատշաճ կամ անպատշաճ բնուր կրնաք երեւակայել թէ հանդէսը ինչ ժիւղակի կերպարանք կառնէր:

Այո՛, պ. Վարդօ, ինքզինքնիդ կորսնցուցած էիք, և այնքան չատ որ օրեր անցնելէ վերջ

ասկալին ձեր յուզման նշանները
ցոյց կուտար ձեր առաջնորդող
յոգութեան և վարդանանցի նկա-
րագրութեան մէջ :

Ազնուութիւնը կուսնեմք խօս-
տովանելու թէ՛ յեղափոխութիւնը
քրուատած եմ, հակայեղափոխա-
կանները հարուստացած, ապա ու-
րեմն չէի կրնար պարտաւել բոլոր
յեղափոխականները անխորաբար
իմ արհաւիր հանքս կեղծ և արդ-
տաս պեղափոխականներու հաս-
ցէին կրնար ուղղուած ըլլալ, այն
ատեն ինչպէս մեկնենք ձեր
զայրոյթը :

Յետոյ ձեր առաջնորդող յոգ-
ուածին մէջ ուզած էք ակնարկել
թէ, իմ խօսածներուս մէջ մտած
կէտեր թողուցած եմ, քաջու-
թիւն չեմ ունեցած որոշ խօսելու
զանազան հաշիւներ ինկատի
ունենալով :

Նախ որ՝ այնքան յատուկ և ո-
րոշ կերպով թուած էք խօսած-
ներս, որ հակասութեան մէջ
կիշնաք այդպիսի կարծիք մը
յայտնելով, երկրորդ՝ եթէ կը
կարծէիք որ ժողովուրդը ինչ ինչ
կէտերու մասին անորոշ մնացած
էր, կրնայիք այդ կէտերը լու-
սաբանել կամ անոնց լուսաբան-
ուիլը պահանջել, ոչ թէ անձի
վրայ յարձակումներ ընել :

Նոյնպէս աւելորդ յոգնութիւն
մը յանձն առեր էք, իմ անձս
բազմաթիւ զննելով զոհող
յեղափոխականի մը հետ : Այդ
բանը մենք իսկ խոստովանած է-
ինք. ինչպէս ե՛ս, նոյնպէս դուք
և մեզ նման շատեր չեն կրնար
բազմաթիւ զոհող յեղափոխա-
կանի մը հետ, ինչ՞ մտաստեղծ
թեանք ալ պատկանի ան :

Արդեւ իմ մասին ուրիշ ատեն
սխալ հարցիք չունենաք, պի-
տարիք, հարկ կը համարիմ այս
առթիւ յայտարարել թէ, ո՛չ մէկ
ատեն ու է անձնական նկատում-
ներ կամ շահեր իմ վրաս ազդած
չեն, միշտ խրատ եմ այնպէս
ինչպէս որ խորհած եմ. և միշտ
ալ գտնուած են պայրացողներ,
ինքիւր չէ թէ ատոնք եղած են
պարագային համեմատ՝ տարբեր
տարբեր համոզում ու կարծիք
ունեցող անձինք :

2. Փեշուսկան
18 փետր. 1903

ՊՐՈՆ ԶԱՅՎ ՓԷՇՄԱԼԱՆՆԵՐ

Ինչպէս տեսնուի էք, ձեր
պատեւիական մեծամտութեան
արդիւնք գոհարը հրատարակում
ենք անփոփոխ կերպով : Ու չը
նայելով որ թէ եկեղեցում և թէ
գոհար յոգուածի մէջ յայտարար-
ում էք որ ես ձեզ սխալ եմ ըմ-
բանել, որով և ետ էք առնում
յեղափոխական վարիչներին հաս-
ցէին ուղղուած ձեր անարգող
խօսքերը : Ես յնու ամենայնիւ ա-

ւելորդ չեմ համարում ձեզ իջեց-
նել այն երեւակական բարձ-
րութիւնից, որի վրա ուզում էք
տեղափոխել ձեր խախտու ոտ-
քերով :

Պարոն, պատեւիական կամ
տիրացուական դարձվածներին
ինչպիսի են ձեր «նւիրական տօն»,
պատշաճաւոր խօսքերը, դա-
ր՛ւ վաղուց անցել է : Իմ համո-
զումով եթէ մի Փէշումալճեան,
թէկուզ նա լինի ակամայ ուսու-
ցիչ, իրեն պատշաճ է համարում
ազգային հանդէսին, եկեղեցում,
խօսել յեղափոխութեան մասին
և իր գլխից ամեն բան դուրս
տալ, ես ինչ առելի պատշաճ եմ
համարում հասարակութեան հաս-
կացնել որ՝ Փէշումալճեանը և իր
նմանները ոչ հայ յեղափոխու-
թեան, ոչ նրա գործիչներին մա-
սին գահափար ունեն և ոչ ուն է
զոհողութիւն կարող են անել այդ
գործի համար :

Ձարմանալի մարդ էք. ինչ
անպատշաճութիւն կա. ինչ որ
ժանապատութեան դպչելու խն-
դիւրը կայ, եթէ հասարակու-
թեան յայտնուի որ Փէշումալճե-
անը յեղափոխական չէ և զու-
հողութեան ընդունակ չէ : Ու-
զում էք որ հակառակն աւելինք,
բայց այն ժամանակ ձեզ ծագ-
բած կը լինէինք :

Յետոյ կարծել էք որ ես զըզ-
ջացած պէտք է լինեմ ձեր ինչ
լինելը որոշելուս համար : Քա-
լիցի. ինչպէս երեւում է այդ-
պէսով դուք ուղեցել էք ձեզ մը
խիթարեւելիքար գործի հա-
մար ոչ մի զըզում չի լինի, իսկ
աշխարհիս մէջ զհարկանց միջ-
քանց իսկական զոյժով մէջ տեղ
դնելուց աւելի արդար գործ չը
կայ :

Յայտարարում էք որ զըզ-
միշտ որոշ էք եկել ձեր զըզ-
պէս, ինչպէս հինգ շաբթի օրը.
բեկը եկեղեցում, պատշաճու-
թեան զէմ չըբաւաճանելու հա-
մար ինչպէս կերտելի, առանց ա-
նուն տալու սիրաւունքոն ու Գուր
պէսեանին ցելի հետ հաւասու-
րեցրիք, իսկ երեկոյան վաղե-
ցիք Գուրպէսեանի մօտ ազաչե-
լու որ օրուան միջադէպի պատ-
ճառով իր թերթում ձեր մասին
չը գրի : Այս թուրքա որոշ
մարդ... այնպէս չէ՞ պարոն Հայկ
Փէշումալճեան :

«Շարժում» ինքզինքնից կոր-
ցրած յայտարարելը բոլորովին
հաճելի չէ եղել ձեզ. և այդ հիւ-
ւանդութիւնը ձեր գլխից իմ գլ-
խին էք ուղում փափաթել :

Այո, դուք խելակորոյս էիք.
ապացոյցը այն է, որ կրեք շաբ-
թի օրը, երբ գիտմամբ ձեր յոգ-
ւածը ձեզ մօտ բերի, ստուգե-
լու համար արգեօք խելակու-
րոյս էիք, թէ խելաթիւրող էք,
գուր ուրաջաբով խօսքի նախա-
բանը, չըբաւաճանելով ձեր կր-

կուպաշտօնակիցները վկայեցին
որ ես որոշ նախարան եմ ունե-
ցել : յայտարարեցիք որ ոչինչ
չէք լսած և չէք կրնար ձեր յոգ-
ւածի մէջ տեղափոխել այդ : Այդ
տեսակցութիւնից ես բոլորովին
համոզվեցի որ դուք ինքզինքնից
կորույսած էիք եկեղեցում. որով-
հե՞տեւ գժարանում եմ ձեզ կեղ-
ծողի դերում տեսնել : Միայն
ինքզինքը կորցրած մարդը կա-
րող է մի պատասխանի սկիզբը
չը լսել :

Ինչքան որ ինչ հաշիւ ունէ՞ք
այդ նախարանը ուրանալու մէջ :
Յետոյ դուք չիշտելով «Շար-
ժում» մէջ ձեր խօսած նիւթի
մասին զըզվածները, ուզում էք ինչ
հակասութեան մէջ բռնել : Այդ
պարոն, հէնց ձեք արամբաճու-
թեան այդ հսկայական հակասու-
թիւնն էք, որ ինչ առելից խօ-
յանալ, եթէ կուզէք սլանալ պա-
տասխանել ու ժողովրդին ցոյց
տալ ձեր պատեւիական արամա-
բանութիւնը :

Յետոյ ուզում էք հաստատել
որ ժողովուրդը դուրս գալով ինչ
լոնցնել տեղ : Ոչ պարոն, նախ
դուք միջամտեցիք, ձեզնից լսել
պահանջեցին ու դուրս եկաք,
յետոյ ձեզ հետեւեցին ձեր խնա-
մի ու արեւակից ազգականները,
որոնք այդ օրը բաւական խոշոր
թիւ էին կազմում, ու իրարան-
ցումը ընկալ կանանց մէջ :

Իմ զայրոյթը մասնանշէլով,
ձեր խելքով, մի տեսակ կծմրի
էք ուզում հասցնել ինչ, թող
ճիգերը թափելով անձնապէս վի-
րաւորելու : Ի դուք, Գուր ձեր
ճառի մէջ պաշտպանում էիք իմ
և իմ թերթի ուղղութիւնը, թէ և
անոնք չտալով և գովաբաներ
կարծում իմ ընկերներին. բայց
գրանից միջնու այդ օրը երբէք
չէք զլայած թէ դուք և թէ ձեր
ամբողջ ընթանիքը ինչ պատշաճ
յարգանքը տալու : Ես համոզումը
չունեմ և չունեի թէ դուք այն
ցած տիպերին էք պատկանում,
որոնք օրտանց չը յարգած մարդ-
կանց, երեսանց յարգում են.
ուրեմն և անձնապէս վիրաւորի-
լու տեղիք չունէի, և իմ զայրոյ-
թը պարզապէս ձեր անմիտ տրա-
մարանութեան դէմ էր :

Վերջին խօսքը Պարոն Փէշումալ-
ճեան, ձեր մեծամտութիւնը
գաղաթնաչէտին է հասնում, երբ
դուք, յեղափոխական զոհողու-
թեան տեսակետով, ուզում էք
ինչ նմաններին հետ համեմատել
նիւրեցէք անհամատեմութեան,
ձեր այդ հակառական մեծամտու-
թեան հանց էք :

Դուք և ձեզ նմանները Վոսթօ-
րի գեղածիծաղ ափերում մուհա-
լէպի ուտելով և ստրկական ներ-
շնչումներով էիք սնանում, երբ
ինչ նմանները ձեզ պէսներին
մարդ դարձնելու ճիգեր թափելու

համար, կամ բանտերում էլին
փտում կամ թէ շղթայակալ ա-
ւազուս ու ձիւնապատ խոշոր տա-
րածութիւններ կտրելով տարա-
գրվում էին...

Ու այս օր էլ ինչ նմանները և
ես միշտ պատրաստ եմ յոյնա-
նման զոհողութիւններ, որպէս-
զի մեր հայրենիքը շուտով աղա-
տի իր զըզելի փեճակից, ու
գաղարկ ձեզ նման տիպեր ար-
տագրիւց :

ՎԱՐՈՊ
19 փետր. 1903
Վառնա

ԻՆՍՏԻՏՍՈՒՅԻ ԱԶԳՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԻ ՊԵՏԱԿԵՐՆԵՐ

Բարեգ. ը/կ. վարչութիւնը. վար-
դանանց հանդիսը, և Արեւիկ հո-
գայարձուցիւնը :

Երբ հասարակային կեդրոն մը և
անոր գործառնութեանց ընթացքը
նկղ ու փոքր չըջանալի մը մէջ կը
թաւալի, անգնց նկատմամբ եղած
որ եւ է հրատարակութիւն պարզ
լուր մը ըլլալէ անդին շանցիք. սա-
կան, երբ այդ կեդրոնները օրէ օր
կը բարգաւաճի ու իրենց աշխա-
տութեան եզրերը կընդլայնին, ե-
րեմն գաղափարներու ներդաշնակա-
ւորումով մը, ու շատ անգամ ան-
ներգաշնակ հասանքով մը մղուելով,
այդ պարագային լրագրութիւնը ան-
հրաժեշտ պահանջ մը կը դառնայ
հրաքի եղած ուղղութիւնը տարածա-
մար անոնց :

Ուրախադիր պարագայ մըն է տես-
նել այսօր քաղաքիս ազգային զըզ-
ծեքը նոյն բարդաւած վիճակին շա-
սած՝ տակաւ առ ասկալ : Զորս տա-
րիներու լուս ու մուշ ազգային աշ-
խատութիւնները, ու միւս կողմա-
նէ, օրէ օր քաղաքիս հայ գաղա-
թիւն բազմանալը, այսօր ստեղծած
են որոշ ուղղութեան մը անկրօնիչ
պահանջը : Պիտի յանանք այդ ուղ-
ղութեան արձագանգն ըլլալ «Շար-
ժում» էլիւրուն մէջ պարբերաբար
Հարկ կը նկատենք կանխալ նախ
յայտարարել թէ, մեր ընթացքի պի-
տի ըլլայ անաչառ. մենք անձեռն
հետ գործ չունինք հետեւաբար,
պիտի քաջալերենք այն ձեռնարկը
եւ ընթացքը, որ օգտակար է քա-
ղաքիս հայութեան կեանքին, ու պի-
տի քննադատենք ինչ որ անօգուտ
և վնասակար է անոր :

Ամիսէն աւելի եղաւ քաղաքիս
Բարեգ. ընկերութեան վարչութեան
ընտրութիւնը. ընտրուած անդամնե-
րէն չորսը իրենց հրատարականը տը-
ուին ու նմացանները զեռ միջնու
ցայսօր որոշ քայլ մը շառին իրենց
զօրութիւնը ապացուցանող. վերա-
նումի մէջ կրնանք թէ ոչ-ի մտա-
ժուռներու մէջ կը թուին ըլլալը :
Այսպէս թէ այնպէս, իրենց սխալ-
եայ պաշտօնավարութեան առաջին
ամիսը անցաւ, առանց որ եւ է մէկ
արդիւնքի. պարագայ մը՝ որ հա-
ւատք չի ներշնչելու կը ծառայէ ի-
րենց սպառազ զործունէութեանց
նկատմամբ : Կատարենք որ աշխատու-
թեան սկիւն, որովհետեւ այժմ ա-
մենաարդիւնաւոր ամիսներն են քնն-
կերութեան նիւթականին համար :
Մնաց որ, հաղարուձէկ աշխատու-

թիւններ կան ըլլալիք: Մեր փափաքն է, որ վարչութիւնը՝ սոյն տարեշրջանին մէջ քիչ մը լրջօրէն նկատողութեան առնէր քաղաքին հայ երիտասարդութեան մտաւորական անձուկ վիճակը. սոյն աշխատութիւնը ամենամեծ գործը պիտի ըլլար նոր-ընտիր վարչութեան. հիմնադիր անդամները չեն մտցած անշուշտ թէ մեկնումի կէտը զազափարի զարգացման հարցը եղած էր. ու գուցէ մինչեւ ցարդ, ամենէն նուազ աշխատութիւնը տրուեցաւ անոր. պէտք է հաստատել ընդհատուած կիրականօրեայ լսարանական դրութիւնը. սոյն աշխատութիւնը՝ բարիքէ մը աւելի, պատք մըն է. համոզուած անդամներու միութեան մէջ է որ ընկերութիւնը իր ապագայ գոյութիւնը պիտի ապահովէ, եթէ նկատի չառնենք իսկ անկէ առաջ գալիք շատ մը օգտակար պարագաները: Ասկէ զատ. բաւ կը համարինք նաեւ սոյն երեք տարուան շրջանը՝ ընկերութեան ամբողջ դրամը լիովին գործածելու: Ժամանակն է որ, կանոնադրին տրամադրութեան համաձայն, մուտքին 1/2ը այլեւս մէկ կողմ դրուի իր պահեստի դրամազուլու ու ճշգրտէն 1/4ը թերթերու, 1/4ը՝ միայն աղքատաց յատկացուի. Առ այժմ այսչափ միայն:

Ամսոյս 13ին «Արաքս» սրահին մէջ, կատարուեցաւ վարչական նշանակումը. նոյն օրը Պատ թաղ խորհրդոյ կողմանէ կանխաւ ելած յայտարարութեան մը համաձայն, քաղաքիս ընտրուած վարչականներն ու խառնուրդները գոց էին: Եկեղեցւոյ աւարտումէն յետոյ, երկուսն իւր իւր բազմութիւնը առաջնորդուեցաւ Արաքս սրահ, ուր հասան նաեւ Պատ թաղ խորհուրդը, ուսուցչական մարմինն ու Հայկազեան վարժարանի երկուսն աշակերտները:

Հանդէսը սկսաւ քայլերգով մը, զոր երգեցին վարժարանին աշակերտները՝ Առաջնորդութեամբ Տ. Մ. Պէտրիկեան, Խորհրդոյ Տ. աստեղագետը բացաւ հանդէսը, ուրկէ յետոյ, երգերու ընդմիջմամբ. ոտանաւորներ արտասանեցին վարժարանի աշակերտները: Տ. Գրանտեան կարդաց Տ. Զօպանեանի մէկ ուսումնասիրութիւնը՝ վարչական նախատեսութեան վրայ. Տ. Տ. Կռնիկեան, Պետրիկեան եւ Ազատեան—այս վերջինը Բուժաներէն լեզուաւ—ատենաբանութիւններ ըրին օրուան հերոսը ու հայաստանի նախկին փոքր պանծացնող, որոնք գազափարներու ներդաշնակութեամբ մը, ներկայ հասարակութեան վիճակը համեմատութեան մը զննելով անցեալին հետ, շեշտեցին ուժ տալ, ներթափանցելու բարոյական օգնելը: Լոր այն ձեռնարկներուն որոնցմէ կախում ունի մեր ցեղին փրկութիւնը, կրակօտ, օգեւորիչ եւ յուսատու սոյն ատենաբանութիւնները երկարօրէն ծափահարեց ներկայ եղող հասարակութիւնը, որ վայրկեան մը մոռցած իր տարագիր վիճակը, մխրճուած անցեալ փառքերու եւ ապագայ յոյսերու մէջ, երկա՛ր ու ազատ շունչ մը առաւ:

Հանդէսը տեւեց երկու ժամ, ուրկէ վերջ հասարակութիւնը մեկնեցաւ խոր ու քաղցր սպաւորութիւններով լեցուն:

Յօդուածս աւարտելէ առաջ, հարկ կը համարինք երկու խօսք ընել նաեւ Աթէնքի հոգաբարձութեան նկատմամբ: Մեր Պուքրէչէն առած տեղեկութեանց համաձայն, այնտեղի կարգ մը ազգայնոց մէջ մեծ յուզում կը տիրէ եղբր այն պաշտօնական յայտարարութեան նկատմամբ, զոր քաղաքիս պատ. թաղ. խորհուրդը ըրած էր, ժամանակ առաջ պատկերացնելով Աթէնքի անարժան քահանայ Խորէն Մուրատեանին անստանական արարքները ու ազգային դրամներու փճացնելը յիշելով, ի նպատակ անբարոյական Խորէն քահանայի մը խօսող սգազայիններուն չէ որ պատասխանել կուզենք՝ քանզի անոնց գոյութեան դեռ կը տարակուսիք. այլ նոյն իսկ Աթէնքի հոգաբարձութիւն կողմէն մարմնոյն կուղղենք մեր հարցումներ: Սոյն հոգաբարձութիւնը ինչու պաշտօնադրով մը, եղած իրական դէպքերէն յետոյ, չի դադարեցուց սկսուած հանդեպակութիւնը ու զայն թերթերու միջոցաւ չի ծանոյց. թէ՛ ինչու յիշեալ քահանային ձեռքէն պաշտօնազրկելը, դրամն ու ժապաւենեալ սուժարը չի գրաւեց: Արդեօք իրաւունք չունինք կարծելու որ, հոգաբարձութիւնը սուսուած մարմինը Մուրատ քահանայի մը համախոհներ եղած ըլլան. եւ միթէ՞ դժուար է, խաչագողութեան մը համար, պատրիարքարանէ յանձնաբարձել մը, կաթուղիկոսէն ժապաւենեալ սուժար առնել յաջողիլը: Հաստատու մեծ իրաւունք ունինք, քանի որ նոյն անարժան կրօնականը, մինչեւ ցարդ, ո՛չ միայն արգիւտներ է, այլ հոս հասած լուրերուն համաձայն, իր քայլեր ուղղորդ է դէպի Ամերիկա, շահատակութիւնները յառաջ տանելու:

Ճարտ-Իշխան
14 փետր. 1903
Բոնսթանցա

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պուլկարիոյ և Ռուժմանիոյ զանազան քաղաքներու մէջ վարդանանց տօնը կատարուեր է բաւական հանդիսաւոր կերպով:

— Պատրիարքարանի երկու գործակատարները որոնց մին է Օրմանի փեռան անպիսան Տէր Ներսէսեանը, հրատարակեան տուեր են:

— Մասնաւոր աղբիւրէ կրմանանք թէ պատրիարքը ստիկանութեան նախարարէն պահանջներ է որ իրեն վրայ փորձ ընող ուսանողին ձեռնդրները էրզրում աքսորուին: Ոստիկանութեան նախարարը մերժեր է, պատրիարքը պալատ դիմեր է իր նպատակին հասնելու համար: Հիմակ այդ ուսանողին եղբայրն ալ ձերբակալուած է:

— Վառնայի դպրոցներուն ի նպատակ տրուած պարահանդէսը բաւական յաջող անցաւ: Մօտ հազար ֆրանքի զուտ արդիւնք ստացուեր է:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Մի քանի լրագիրներ հրատարակեցին որ Միթրոփիցայի ուս. հիւպատոսը սպաննուած է ալպանացիներու ձեռքով:

Այդ լուրը հիմնովին կը հերքուի:

Սուլթանը պատուիրած է հուսարներու նոր գունդ մը հիմնել, որպէսզի անոնց, փոխանակ ալպանացիներու, իր պալատին պահպանութիւնը յանձնէ: Սուլթանը կուզէ ազատիլ ալպանացի պալատական զօրքէն, որպէսզի առանց վախճալու կարենայ Մակեդոնացի ալպանացիները զսպել:

— Պրանսական կառավարութիւնը երկրորդ դեղին գիրք մը կը պատրաստէ Թուրքիոյ գործերու մասին: Պրանսական մամուլը Մակեդոնիոյ ըստերոգումներու ծրագիրը անօգուտ կը համարէ:

Աւստրիական, գերմանական և ռուսական մամուլը գոհ են Սուլթանի վարմունքէն:

— Իտալիոյ տնտեսէն մէկուն մէջ, Պակար թատրոնին քովերը ուստիկանութիւնը բազմաթիւ զէնքեր և պայթուցիկ նիւթեր գտեր է. խուզարկութիւնը կը շարունակուի, կը կարծուի որ մակեդոնացիները մեծ դաւադրութիւն մը պատրաստած ըլլան:

— Բարձրագոյն Գուռը Պիգօլիոյ, Սելանիկի և Դուսիլիքի վալիներուն հազորդած է բարենորոգումներու կարեւոր կէտերը և իրմի փաշային երեք տարիով զլաւաւոր տեսուչ կարգուելը:

— Ռուս կառավարութիւնը Մակեդոնիոյ քանի մը քաղաքներու մէջ նոր հիւպատոսութիւններ պիտի հաստատէ, որպէսզի կարծեցեալ բարենորոգումներու գործադրութեան վրայ հսկեն:

— Սուլթանը հրամայած է Մակեդոնիոյ մէջ պահք Օթոմանի քանի մը մասնաճիւղեր հաստատել:

ՊՈՒԼԿԱՒԱՍ—ՄԱԿԵԴՈՆԻԱ

Մակեդոնիոյ զանազան կողմերը սկսեցին հրոսախմբեր երեւնալ, որոնք ընդհարումներ կուսնենան թուրք զօրքերու հետ:

— Պորիս Սարաֆօֆ, որ այժմ Մակեդոնիոյ կը գտնուի, պուլկար թերթի մը ըսելով, Պուլկարիոյ նախարարապետ պ. Տանէֆի նամակ մը կը գրէ, որով կը յայտարարէ թէ Մակեդոնիոյ վիճակը անհանդուրժելի է և քանի որ մակեդոնական խնդիրը իր լուծման սուր վիճակին մէջ կը գտնուի, պէտք է որ Պուլկարիան

ազդու կերպով միջամտէ:
— Այսօր Պուլկարիոյ բոլոր քաղաքներու մէջ հանդիսաւոր կերպով տօնուեցաւ Պուլկարիոյ ազատութեան 25 ամեակը:

ՍԵՐՊԻԱ

Մամուլը ամենեւին գոհ չէ թուրքիոյ ընդունած բարենորոգումներու ծրագրէն, որմէ պիտի օգտուի և Հին Սերպիան. Թագաւորը պատերազմական ոգով ճառ մը արտասաներ է, այդ ճառը Սուլթանին հաճելի չէ եղած, և իր ներկայացուցչին պատուիրեր է բացատրութիւն պահանջել թագաւորէն:

Ա Ի Ս Ս Ր Ի Ա

Կառավարութիւնը արգիւտ էր ի նպատակ Մակեդոնացի գաղթականներու երեկոյթ մը տալ. երեսփոխանական ժողովին մէջ երեսփոխան Վուքիչ հարցապնդում ըրեր է այդ արգիւտի առթիւ: Նախարարապետը պատասխաներ է որ այս պարագաներու մէջ երբ աւտորիական կառավարութիւնը որոշ դիրք մը բռնած է մակեդոնական խնդրի մէջ, այդպիսի թոյլատուութիւն մը գէշ կերպով պիտ բացատրուի:

ԱՄԵՐԻԿԱ

Նախագահին նիւ—եօրք երթալուն պատճառով ուստիկանութիւնը խիտ միջոցներ ձեռք առած է անիշխանականներու դէմ: Գանի մը անիշխանականներ ձերբակալուած են:

Ա Ր Մ Է Ն Ի Ա

Լ ի ն ջ ի
(Հեղինակի պատկերով և ինքնակենսագրութեամբ)
Գրեց
Պ. Տօնապետեան
Գիւն
2 1/2 շիլին 1րբ. 25 կոպ.
3 ֆր. 60 սանթ
Գիմել աշխատասիրողին.
117 Kosoboffs' Pos
Հեքհեքս'ս Բուֆ
Լոնսօն Մ.

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна